

Սրան յաջորդում է երկրորդ յիշատակարանը, որ ոտանաւոր է: Սոյն յիշատակարանի սկիզբն ընկել է կաղմարարի դանակի տակ: Այստեղ կարդում ենք.

« »

Զիւնդիրըս քո կատարեցաք,

Զոր խընդրեցեր դործով արադ:

Զայս իմատնոց բանս որ ի կարդ,

Զոր ի Յունաց թարգմանեցաք,

Զսոսա դրեցի շարադատակ,

Եւ գէշերմէսինըն յաւելաք:

Արդ՝ աղաչեմ հոգով յըստակ

Զտէր Աւետիքըդ հրաւիրակ» են. (էջ 174ա):

Դաւիթ եպիսկոպոսի թարգմանութիւններն ու սոյն յիշատակարաններն այս ձեռագրում ընդօրինակուած են Սիմէոն Տրապիզոնցու ձեռքով 1515 թուին, բայց կարելի է հաստատ ասել, որ «Բանք իմատնոց»ը թարգմանուել է 1514 եւ կամ 1515 թուին, իսկ Հերմէսի ճառը՝ հէնց 1515 թուին, որովհետեւ յիշատակուող Աւետիք նուիրակը 1515 թուի առաջին ամիսներին է եղել Կիպրոսում²:

Դաւիթից մեզ հասել են նաեւ իտալերէն լեզուով երկու նամակներ, որոնք 1515 թուին Կիպրոսից ուղղուած են վենետիկեան ժամանակակից պատմագիր Դոնատոյին, Donato da Lezze, որը հեղինակ է «Թուրքական պատմութիւն» («Historia turchesca») արժէքաւոր աշխատութեան: Նշում է, որ վերջինս բացառապէս Դաւիթ եպիսկոպոսի եւ Vicentino Angiolelloի հետ ունեցած կապերի շնորհիւ է, որ կարողացել է հեղինակութիւն դառնալ թուրքական հարցերում: Նա 1509 թուի Փետրուարից մինչեւ 1510 թուի վերջերը, կամ դուրսէ եւ մասամբ 1511 թուին, գտնուել է Կիպրոսում՝ կղզու վենետիկեան կառավարչի մօտ որպէս խորհրդական, եւ հաւանաբար այս ժամանակ է, որ ծանօթութիւն է հաստատուել Դաւիթ եպիսկոպոսի հետ. իսկ 1515 թուականին, երբ podestà et capitano di Rovigo պաշտօնն էր վարում, շարունակելով հետաքրքրուել Արեւելքի հարցերով,

2. Դաւիթ եպիսկոպոսը Կիպրոսից Դոնատոյ դա Լեզզէին ուղղած իր 23 Ապր. 1515 թուակիր նամակում խօսում է այս նուիրակի մասին եւ նրան հաղորդում՝ Սուլթան Սելիմի արշաւանքների վերաբերեալ Աւետիքի տուած տեղեկութիւնները. հմտ. Հ. Ղ. ԱԼԻՇԱՆ, «Հայ-վենետ», վենետիկ, 1896, էջ 205-206:

Աւետիք նուիրակի մասին տես նաեւ մեր «Հայկական մասնագիտութիւն», հտ. Բ, Երեւան, 1976, էջ 1010-1011:

Թղթակցութեան մէջ էր Դաւիթի հետ, եւ այս թղթակցութիւնից են Դաւիթի վերոնշեալ երկու նամակները, որոնք Սանուտոյի մօտ են պահուած³: Այս նամակներով Դաւիթը տեղեկութիւններ է հաղորդում թուրք-պարսկական կռիւների եւ յարաբերութիւնների մասին: Դոնատոյի եւ Դաւիթ եպիսկոպոսի կապերի մասին խօսում է դոկտ. Ի. Ուրսուն՝ Դոնատոյի աշխատութեան հրատարակութեան առթիւ գրած իր Ներածութիւնում⁴:

ՅԱԿՈԲ ԱՆԱՍԵԱՆ

3. «I Diarii di Marino Sanuto», t. XX, p. 245-247 e 268-272.

Այս նամակների վերնագրերն են՝ ա) «Copia ad litteram de una letera di Cypro scritta per il vescovo di Armenia, nominato Davit, a sier Donado da Leze qu. sier Priamo, ricevuta qui a di 31 Mazo 1515». բ) «Copia de una letera di Cypro, scripta per lo episcopo di Armenia, data a di 23 April 1515, drizata a sier Donado de Leze, fo Consier in Cypro, et recevuta qui a di 4 Zugno. Nara dil Sophi e Turcho; la qual letera ad litteram è copiada».

4. DONATO DA LEZZE, «Historia turchesca (1300-1514), publicată, adnotată, împreună cu o Introducere de Dr. I. Ursu, Bucureşti, 1909, p. XXI-XXII.

Résumé

DAWIT' KIPRAC'I

(HAKOB ANASSIAN)

Dawit' Kiprac'i fut évêque des Arméniens de Chypre au début du XVI^e siècle. Homme cultivé, polyglotte, il s'est consacré à l'activité littéraire, s'occupant surtout de courtes traductions, conservées dans le ms. No 2543 du Matenadaran d'Erévan (pp. 171a-173a). On y trouve une série de propositions de Platon, d'Aristote, d'Apollonius etc. Dawit' a également traduit de l'arabe le sermon de Hermès «Sur l'économie du Verbe de Dieu». L'A. cite deux colophons de Dawit' et mentionne ensuite ses relations avec l'historien vénitien Donato da Lezze. Il nous reste, relatées par Sanuto, deux lettres de Dawit' (en italien) adressées à Donato qui avait reçu de lui des informations qui servirent de matériau à son «Historia turchesca».